



86 (270). ԱԽՄԱԽ ՄԱՐԴ

Մարդ մե ուրանց դեղեն կէրթա մոտիկ գեղ ուր բարեկամի տուն: Հացի վախտ կերակուլ կը դնին յառջև, կերակուլ արնի կէղնի, ուր մտքի մեջ կըսեն. «Ըսի՞մ թե արնի է. ըսի՞մ, թե՞ չըսիմ, ըսի՞մ. թե՞ չըսիմ», մեկ էլ կը տեսնա՝ կերի սրժո՞ճեր է:

Մարդ շնորհակալ կէղնի, կէրթա, դեղեն օր դուս դելնա՝ կը փոշմընի, յետ կը դառնա, վաղելով դիկա բարեկամի տուն, կըսեն.

— Քա՛վոր աղա, ձեր կերակուլ արնի էր, չըսի՞ք թե ուտողն ախմախ էր, չիմցավ:

Տանտերն յոտից գլուխ կը չափեն բարեկամին, կըսեն.

— Ձր նեղենաս, սա՛նահեր, վո՛ւա, դու ախմախ իս ու իրեր խաթ ախմախ. չըմքի մեծորեք ըսեր ին. «Խելք գլխին մարդ, ո՞ր դցավն գիմնա՝ կաշխատի յառեջն առնեն, օր չը վնասն ուրին, ախմախ մարդն կը թողեն, օր ցավն ուրին ուտեն», իմալ օր դու կերար մեր արնի կերակուլ:

